



№ 04/04/ 467 - 20

« 24 » 03 2020թ.

**Հայաստանի Հանրապետության  
փոխվարչապետ, պարետ՝  
պարոն Տիգրան Ավինյանին**

**Հարգելի պարոն Ավինյան,**

Մինչև արտակարգ դրություն հայտարարելը, Փաստաբանների պալատը՝ դրսևորելով սոցիալական բարձր պատասխանատվություն, դեռևս 2020թ. փետրվարի 28-ից կորոնավիրուսի հետ կապված քաղաքացիների և աշխատակազմի առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ էր կազմակերպել:

Պարետի 24.03.2020 թվականի № 14 որոշմամբ որոշ բացառություններով արգելվել է տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելը:

Բացառությունների մեջ չեն ներառվել փաստաբանական գործունեության և իրավաբանական ծառայությունների տեսակները (69.10.0): Բացառությունների մեջ ներառված չէ նաև Փաստաբանների պալատի, այդ թվում՝ հանրային պաշտպանի գրասենյակի գործունեությունը<sup>1</sup>:

Պարետի 24.03.2020 թվականի № 15 որոշմամբ սահմանափակումներ են կիրառվել նաև հանրային իշխանության մարմինների գործունեության նկատմամբ, այդ թվում՝ դատական և օրենսդիր իշխանության մարմինների նկատմամբ:

**Փաստաբանների պալատն իր մտահոգությունն է հայտնում փաստաբանական գործունեության և Փաստաբանների պալատի գործունեության արգելքի (սահմանափակման) կապակցությամբ և գտնում է, որ պետք է արգելքը վերացվի, հեղուկալ պարճառաբանությամբ.**

**1.1 Իրավական հարց՝**

Արդյո՞ք կարող է պարետը արգելել (սահմանափակել) Փաստաբանների պալատի գործունեությունը և փաստաբանների (փաստաբանական կազմակերպությունների)՝ փաստաբանական գործունեությունը:

<sup>1</sup> Չնայած նրան, որ սահմանափակումը վերաբերում է տնտեսական գործունեությանը, ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. թիվ 874-Ն հրամանով հաստատված դասակարգիչը տնտեսական գործունեությունը լայն իմաստով է ներկայացնում

## 1.2 Կանոն՝

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արտակարգ դրության ժամանակ սույն հոդվածով նախատեսված միջոցառումների իրականացումը չի կարող խոչընդոտել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, **Հայաստանի Հանրապետության դատարանների** և Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի **քննական գործունեությունը**:

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով **երաշխավորվում է** անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: **Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով**:

«Փաստաբանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խնդիրներից է օրենքով նախատեսված դեպքերում յուրաքանչյուրի համար հավասարապես ապահովել մատչելի և արդյունավետ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրականացումը:

ՄԱԿ-ի Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքների 16-րդ կետի համաձայն՝ կառավարություններն ապահովում են, որպեսզի իրավաբանները

ա) կարողանան իրենց մասնագիտական բոլոր պարտականությունները կատարել սպառնալիքներից, խոչընդոտներից, ահաբեկումից կամ անարդարացի միջամտությունից զերծ մթնոլորտում:

բ) կարողանան ուղևորություններ կատարել և իրենց հաճախորդների հետ անարգել խորհրդակցել երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:

գ) դատական հետապնդման և դատական, վարչական, տնտեսական կամ այլ պատժամիջոցների չենթարկվեն՝ ընդունված մասնագիտական պարտականություններին, նորմերին ու բարոյականությանը համապատասխան ցանկացած գործողության համար, ինչպես նաև չենթարկվեն նման հետապնդման և պատժամիջոցների սպառնալիքների:

## 1.3. Վերլուծություն և եզրահանգում

Փաստաբանները Հայաստանի Հանրապետությունում գործունեություն են իրականացնում անձամբ, կամ առևտրային կազմակերպություններ ստեղծելու միջոցով: Փաստաբաններն իրավաբանական օգնություն ցույց են տալիս նաև դատարանում ներկայացուցչություն կամ պաշտպանություն իրականացնելու միջոցով:

Քրեական և քաղաքացիական դատավարական կարևոր սկզբունքներից է մրցակցության սկզբունքը: ՀՀ ներպետական օրենսդրության, միջազգային պայմանագրերի, այդ թվում՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի դրույթներից հետևում

է, որ առանց փաստաբանների մասնակցության հնարավոր չէ իրականացնել արդարադատություն:

**Ակնհայտ է, որ նույնիսկ արտակարգ դրության օրերին անձինք կարիք են ունենալու իրավաբանական օգնություն ստանալու, քանի որ՝**

- Հայաստանի Հանրապետությունում շարունակվելու են քրեական հետապնդման ենթարկվել քաղաքացիները, այդ թվում՝ կատարվելու են քննչական անհետաձգելի գործողություններ,

- ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների խախտումների հարցերով ընթանալու են անհետաձգելի դատավարություններ (օրինակ՝ մեղադրյալի կալանավորման հարցով դատական նիստ),

- հնարավոր են մարդկանց իրավունքների և ազատությունների խախտումներ (ապօրինի ազատությունից զրկում, ապօրինի տուգանքներ և այլն):

ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածի համաձայն՝ **արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ սրանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:**

Այս պայմաններում, ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (**բացառության տակ գտնվող 64-րդ հոդված**) չի կարող սահմանափակվել, այսինքն՝ կառավարությունը չի կարող մարդկանց զրկել փաստաբանի օգնությանը դիմելու իրավունքից:

Փաստաբանների (փաստաբանների պալատի) իրավունքները և պարտականությունները կարող են սահմանվել, հետևաբար և սահմանափակվել՝ միայն ՕՐԵՆՔՈՎ՝ համաձայն Սահմանադրության 64-րդ հոդվածի (այս նորմն առանց բացառության գործում է նաև արտակարգ դրության ժամանակ): Հետևաբար, կառավարության կամ պարետի<sup>2</sup> որոշմամբ չեն կարող փաստաբանների կամ փաստաբանների պալատի համար սահմանվել պարտականություններ կամ իրավունքի սահմանափակումներ:

Ելնելով վերոգրյալից,

խնդրում ենք՝

- Վերացնել փաստաբանական գործունեության նկատմամբ կիրառված սահմանափակումները.

<sup>2</sup> Այս պահին չենք քննարկում պարետի լիազորությունների հարցը

- Վերացնել Փաստաբանների պալատի (այդ թվում՝ հանրային պաշտպանի գրասենյակի) գործունեության նկատմամբ կիրառված սահմանափակումը:

**Հ.Գ. Սույն գրությունը որևէ կերպ չի արժեզրկում Փաստաբանների պալատի դիրքորոշումը և հավանությունը Կառավարության՝ նոր կորոնավիրուսի դեմ պայքարի քաղաքականության իրականացման հարցում:**

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան